կացած, եւ ո՞ր մասը՝ ուրիշ ազգութիւններից։ Եթէ սակայն ընդունինք անգամ, որ Ախալքալաքի բնակչութիւնը նախապատերազմեանի բաղդատութեամբ պակսել է որոշ չափով — ինչ որ հաւանական է ծանօթ պատճառներով — բայց եւ այնպէս յարաբերութիւնը զգալի փոփոխութեան չէ կարող ենթարկուած լինել։ Բոլոր պարագաներում՝ ինչպէս առաջ, այնպէս եւ այժմ Ջաւախքի ազգաբնակութեան զգալի մեծամասնութիւնը այսօ՛ր եւս հայերն են կազմում։

1914 թուականի տուեալներով՝ Ախալքալաքի գաւառը (տարածութիւնը՝ 2800 քառ. քմ.) ունէր ընդամէնը 104 հազար բնակչութիւն (կլոր հաշուով)։ Դրանից՝ հայեր 81 հազար, մահմեդականներ՝ 7 հազար (մի փոքր պակաս), ռուսեր՝ 7 հազար։ Այս նշանակում է՝ հայութիւնը կազմում էր մօտ 77 տոկոսը ազգաբնակութեան, իսկ վրացիները՝ ոչ իսկ 7 տոկոսը։ Եվակէտ ունենալով ուրեմն թէկուզ հենց այդ միակ պարագան, որ հիմք է կազմում ազգերի ինքնորոշման սկզբունքի, տեսնում ենք, թէ ո՞րչափ արտառոց է վրացական նկրտումը Ախալքալաքի վերաբերմամբ եւ ո՛րչափ արդար՝ հայկականը։ Ախալքալաքը Վրաստանին կցելու պահանջը արտառոց է նաեւ այն տեսակէտից, որ այդ գաւառը աշխարհագրօրէն եւս ոչինչ առնչութիւն չունի Վրաստանի հետ, այլ, ընդհակառակը, Հայկական Բարձրաւանդակի մի կտորն է հանդիսանում։

Բաղդատեցէք Ջաւախքի մակերեւոյթի կազմութիւնը, նրա կլիման, բուսական եւ կենդանական աշխարհը մի կողմից Հայաստանի եւ միւս կողմից Վրաստանի հետ, ու պիտի համոզուիք առածիս։ Ինչպէս Հայաստանը առհասարակ, այնպէս նաեւ Ջաւախքը ի մասնաւորի, բարձրադիր լեռնադաշտ է, կլիման՝ խիստ, երկարատեւ ձմեռով, լեռներն էլ հարուստ են արօտներով։ Ուրիշ խօսքով՝ նա անմիջական շարունակութիւնն է մեր Վանանդի (Կարս), Շիրակի (Ալ-պոլ) եւ Տաշիրքի (Լօռի) ու Փամբակի լեռնադաշտերի — ամէն տեսակէտով, բայց եւ ոչ մի տեսակէտով՝ Վրաստանի։ Վերջինս, յայտնի է, զաղտիար չունի սարահարթերի մասին, այլ ամբողջապէս ցածրադիր գետահովիտներից է բաղկացած, կլիման մեղմ է, Արեւմտեան Վրաստանում՝ մինչեւ իսկ մերձ-արեւադարձային։ Վրաստանի հովիտները արօրատեղիներ չունեն, այլ ծածկուած են անտառներով, իսկ անտառ բոլորովին չկայ Ջաւախքում։

Այս ամենին համոզուելու, սեփական աչքերով տեսնելու եւ մորթով չօշափելու համար բաւական է, որ մէկը Ջաւախքից Վրաստան եւ Ջաւախքից Հայաստան անցնի։ Այդ ճամբորդութիւնը արել եմ ես չա՛տ տարիներ առաջ, ու դեռ մինչեւ հիմա էլ թարմ է տպաւորութիւնը մէջս։

Գէորգեան ճեմարանի աշակերտները մի գեղեցիկ սովորութիւն ունէին — շատ ուրիշների հետ միասին։ Նրանք ամառուան արձակուրդներին առաջնորդութեամբ իրենց ուսուցիչների եւ կամ դոնէ լսարանական ուսանողների՝ ոտքով ճամբորդում էին մեր հայրենի աշխարհի այս կամ այն բնագաւառը, ծանօթանում մեր ժողովուրդի նիստ ու կացին, յաճախ աղդագրական-բանահիւսական նիւթեր հաւաքում, ուսումնասիրում մեր պատմական յիշատակարանները, երկրի բնութիւնը, եւայլն։ Ի մասնաւորի Անին ընդհանուր հետաքրքրութեան առարկայ էր։ Ամօթ էր համարւում՝ լինիլ ճեմարանի սան, բայց դոնէ մէկ անգամ Անին չտեսնել։ Այս — խմիչի այլոց։

Մի ամառ էլ՝ մի քանի ընկերներով որոշեցինք նման ճամբորդութիւն կատարել։ Եղանք Անի, տեսանք Շիրակի պատմական ուրիշ վայրեր եւս, անցանք Կարս, այնտեղից վերադարձանք Ալէքսանդրապոլ եւ որոշեցինք Ախալքալաքի վրայով շարունակել ճանապարհնիս մինչեւ Թիֆլիս, ուր մեր ծնողներն էին ապրում (միշտ էլ — ոտքով, մինչեւ Բորժոմ կայարանը, ուսկից արդէն երկաթուղին մեզ հասցրեց Թիֆլիս)։ Մեր այդ աշակերտական ճամբորդութիւնը տեւեց մի քանի շաբաթ։

Ալէքսանդրապոլից քայլերնիս ուղղեցինք, խճուղիով, դէպի հիւսիս, դէպի Ախալքալաք։ Անցանք լճերի շրջանով, եղանք նաեւ ռուսական գիւղերում, եւ մենք չզգացինք երբեք, որ մի տարբեր աշխարհ ենք մտնում — կլիմայական եւ այլ տեսակէտից։ Շիրակի եւ Ջաւախքի մէջ տարբերութիւնը այլ չէր, քան Շիրակի